Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 14-ի N 431 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչությունը (այսուհետ՝ տեսչություն) նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն օրենքով նախատեսված դեպքերում իրականացնում է վերահսկողական գործառույթներ՝ նախարարությանը վերապահված իրավասությունների սահմաններում և արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին (այսուհետ՝ նախարար) ներկայացնում է առաջարկություններ պատասխանատվություն կիրառելու վերաբերյալ՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

2. Տեսչությունն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Տեսչությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ նախարարի ներկայացմամբ:

3. Տեսչության լիազորությունները սահմանվում են օրենքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրապե-

տության կառավարության որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Տեսչությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Տեսչությունն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Տեսչությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

II. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Տեսչության նպատակները և խնդիրներն են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախարարությանը վերապահված իրավասությունների սահմաններում՝

1) նախարարության առանձնացված ստորաբաժանումների կողմից օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման ապահովումը.

2) նոտարների և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման ապահովումը.

3) առանձին ոչ առևտրային կազմակերպությունների կողմից օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման ապահովումը, ֆինանսական գործունեության թափանցիկության բարձրացումը.

4) դատավորի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կարգապահական վարույթ հարուցելու և նախարարի լիազորության իրականացման ապահովումը.

5) քաղաքացիների ընդունելության կազմակերպումը, դիմումներին և բողոքներին օրենքով սահմանված կարգով ընթացք տալու ապահովումը.

6) Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախարարությանը և նախարարին վերապահված այլ վերահսկողական լիազորությունների իրականացման ապահովումը:

III. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Տեսչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) օրենքով սահմանված կարգով և դեպքերում ուսումնասիրում, ստուգում և ամփոփում է նոտարների գործունեությունը, վերահսկողության արդյունքներով նախարարին ներկայացնում է առաջարկություններ նոտարի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ.

2) օրենքով սահմանված դեպքերում և կարգով միջնորդում է նախարարին նոտարի գործունեությունը կասեցնելու վերաբերյալ.

3) օրենքով սահմանված կարգով և դեպքերում իրականացում է վերահսկողություն Նոտարական պալատի կողմից օրենքների և այլ իրավական ակտերի ու Նոտարական պալատի կանոնադրական պահանջների պահպանման նկատմամբ.

4) օրենքով սահմանված կարգով և դեպքերում իրականացնում է կազմակերպությունների իրազեկում, ընդունում է օրենքով սահմանված ծանուցումներ, տեղեկանքներ, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր.

5) օրենքով սահմանված կարգով և դեպքերում իրավաբանական անձին նախազգուշացնում է օրենքների պահանջների հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ՝ հայտնաբերված խախտումների վերացման կարգի և ժամկետների վերաբերյալ առաջարկությամբ.

6) օրենքով սահմանված կարգով և դեպքերում՝ Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով կազմակերպություններում իրականացնում է հսկողություն, վերահսկողություն, այդ թվում՝ ստուգումներ.

7) օրենքով սահմանված կարգով և դեպքերում ներկայացնում է կազմակերպությունների գործունեության կասեցման, ինչպես նաև լուծարման պահանջ և կիրառում է պատասխանատվության միջոցներ.

8) օրենքով սահմանված կարգով և դեպքերում իրականացնում է վերահսկողություն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ.

9) իրականացնում է վերահսկողություն դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության գործունեության ընթացքում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ, ներկայացնում է առաջարկություն հարկադիր կատարողին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

10) իրականացնում է վերահսկողություն քրեակատարողական ծառայության գործունեության ընթացքում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ, ներկայացնում է առաջարկություն քրեակատարողական ծառայողին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

11) նախարարի հանձնարարությամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով անցկացնում է ծառայողական քննություններ.

12) նախապատրաստում է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի նյութերը.

13) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն, քննարկում և վերլուծում է նոտարների, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական ծառայության, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործունեությանը, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի մասին հաղորդող դիմումները և բողոքները.

14) հարուցում և իրականացնում է վարչական վարույթ.

15) նախարարի հանձնարարությամբ՝ իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախարարությանն ու նախարարին վերապահված այլ վերահսկողական գործառույթներ.

16) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

IV. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Տեսչությունը կառավարում է նախարարը: Տեսչության անմիջական ղեկավարումն իրականացնում է տեսչության պետը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

10. Տեսչության պետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

11. Տեսչության պետը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախարարությանն ու նախարարին վերապահված

վերահսկողական և օրինականության ապահովման գործառույթների իրականացման ապահովման համար:

12. Տեսչության պետը հաշվետու է Հայաստանի Հանրապետության վարչապետին, նախարարին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև նախարարության աշխատակազմի ղեկավարին:

13. Տեսչության պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է տեսչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է տեսչության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի, նպատակների ու խնդիրների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում նախարարին.

3) նախարարի հաստատմանն է ներկայացնում տեսչության տարեկան աշխատանքային ծրագիրը.

4) իր իրավասության սահմաններում արձակում է կարգադրություններ և տալիս ցուցումներ ու հանձնարարագրեր, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության և տեսչության անունից, ինչպես նաև տալիս է տեսչության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) իր իրավասության սահմաններում նախարարության աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ տեսչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ.

6) ապահովում է նախարարի հրամանների և ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին.

7) լսում է տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները.

8) իրականացնում է վերահսկողություն տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

9) նախարարին ներկայացնում է առաջարկություններ տեսչության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև տեսչության խորհրդակցական մարմիններ ստեղծելու վերաբերյալ.

10) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

11) նախարարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.

12) յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ ամփոփում և նախարարին է ներկայացնում տեղեկանքներ ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների քննարկման արդյունքների մասին.

13) նախարարի հանձնարարությամբ՝ կազմակերպում է արտածրագրային ստուգումներ և ուսումնասիրություններ.

14) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

14. Տեսչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է տեսչության պետի տեղակալը՝ քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

15. Օրենքով, այլ իրավական ակտերով, նախարարության և սույն կանոնադրությամբ տեսչությանը վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է նախարարության աշխատակազմը:

16. Տեսչությունն ունի կառուցվածքային ստորաբաժանումներ: Իր խնդիրների ու գործառույթների իրականացման ապահովման նպատակով կարող են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեսչության ենթակայությանը հանձնվել պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

17. Տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

18. Տեսչության վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 14-ի N 431 - Ն որոշման

Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության օրինականության վերահսկողության բաժին

2. Նոտարիատի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժին

3. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող և քրեակատարողական ծառայությունների գործունեության օրինականության վերահսկողության բաժին

4. Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի նյութերի նախապատրաստման բաժին

5. Բողոքների վերլուծության բաժին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ